ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՊՀ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ

Հունիսի 3-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՊՀ անդամ երկրների Անվտանգության մարմինների և հատուկ ծառայությունների ղեկավարների խորհրդի անդամներին, որոնք Երևան են ժամանել մասնակցելու խորհրդի հերթական նիստին:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով հյուրերին, կարևորեց նրանց դերը հասարակության խաղաղ ու բարօր կյանքի կերտման գործում: Նորին Սրբությունն Աստծո օգնականությունն ու զորակցությունը մաղթեց ԱՊՀ անդամ երկրների Անվտանգության մարմինների և հատուկ ծառայությունների ղեկավարների խորհրդի անդամներին իրենց դժվարին առաքելության մեջ: «Հավատում ենք, որ այս համագործակցությունը պիտի բարի պտուղներ բերի ԱՊՀ անդամ երկրներից յուրաքանչյուրին», - նշեց Հայոց Հայրապետն իր խոսքում:

Հանդիպման ընթացքում, ի պատասխան ներկաների հարցումների, Վեհափառ Հայրապետը ներկայացրեց Հայ Եկեղեցու գործունեությունը կրթական և սոցիալական ոլորտներում, Եկեղեցի-պետություն հարաբերությունները: